

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

NN ը/կ	Հիմնավորումներ
	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
1.	<p>Երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանն աջակցության, մասնակցային գործընթացների խթանման վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում որոշումների ընդունման գործում երիտասարդների, երիտասարդական ակտիվ խմբերի, ինչպես նաև երիտասարդական հասարակական կազմակերպությունների անմիջական և միջնորդավորված ներգրավվածության ապահովումը:</p> <p>Չնայած վերջին տարիներին արձանագրված որոշակի առաջընթացին՝ դեռևս նկատվում է երիտասարդների պասսիվություն երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցության, նրանց տեղեկացվածության և մի շարք այլ գործընթացների առումով:</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում 2010 թվականից գործող առցանց դրամաշնորհային համակարգի նպատակն է երիտասարդական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունների իրականացմանն աջակցելը և երիտասարդական քաղաքականության իրականացման բոլոր փուլերում նրանց մասնակցությունը խթանելը: Առցանց դրամաշնորհային համակարգի գործարկման 5 տարվա ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներին լուծում տալու նպատակով անհրաժեշտություն է առաջացել արդիականացնելու առցանց դրամաշնորհային համակարգը՝ տեխնիկական և բովանդակային առումներով: Կատարվող փոփոխությունները կբարձրացնեն առցանց դրամաշնորհային համակարգի թափանցիկությունը և գործունեության արդյունավետությունը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդության մասնակցության մակարդակի, երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացում, երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում:</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգում գրանցված փորձագետների ու հասարակական կազմակերպությունների վերապատրաստում և կարողությունների զարգացում:</p>

2.	<p align="center">Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի զարգացման խթանման վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրների որոշակիորեն լուծումն է, այդ թվում՝ մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատանքի որակի, մարզական հերթափոխի պատրաստման համար անհրաժեշտ պայմանների բարելավումը, մանկապատանեկան սպորտի ոլորտի իրավական և մեթոդական դաշտի կատարելագործումը, նյութատեխնիկական բազայի բարելավումը, վերապատրաստված մարզիչ-մանկավարժներով համալրումը և այլն:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրների որոշակիորեն լուծումները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի ոլորտի զարգացմանը:</p>
3.	<p align="center">«Հայկական ազգային կոլս» ընթշամարտ» մարզաձևի զարգացման խթանման վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Հայ ազգի մարզական և մշակութային ավանդության ու ժառանգության պահպանում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում, ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի Մինչև 2020 թ. անկախ պետությունների համագործակցությունում ազգային մարզաձևերի աջակցության և զարգացման ծրագրի դրույթների կատարում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Հայ ազգի մարզական և մշակութային ժառանգության պահպանում, «Հայկական ազգային կոլս» ընթշամարտ» մարզաձևի պահպանում, զարգացում և տարածում Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և սփյուռքի հայկական համայնքներում:</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ